«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ»

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐՄԻՆԵ ԷԴԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ՂԵԿԱՎԱՐ՝ 6-ՐԴ ԽՈՒՄԲ, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՄԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն 3

1. Արժեք և արժեքային համակարգը սովորողների մոտ 4

2. Արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում 9

Եզրակացություն 21

Օգտագործված գրականության ցանկ 22

Ներածություն

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի գրականության, պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունն է, որը լավագույն կերպով մատուցվում է գրականության դասընթացների ժամանակ: Այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

1. Արժեք և արժեքային համակարգը սովորողների մոտ

Արժեքաբանությունը որպես ինքնուրույն գիտություն, իմաստասիրության ամենաերիտասարդ բաժիններից է և ի հայտ է եկել 19-րդ դարի վերջին: Ձևականորեն աքսիոլոգիայի սկիզբը կարելի է կապել Ռ.Գ. Լոտցեի «Միկրոկոսմոս» եռահատոր քննախոսության հետ (1856-1864թթ.):

Մարդու արժեքային գիտակցության տարբեր դրսևորումների միասնության գիտակցումն ի հայտ է գալիս ավելի ուշ, քան բանականության և իրական կյանքում նրա դերի մասին պատկերացումը: Հենց բանականությունն է՝ իբրև իմացության միջոց, գտնվում հունական մտածողության ուշադրության կենտրոնում, ընդ որում՝ *լոգոսը* և՛ բանականությունն է, և՛ խոսքը, քանի որ խոսքը մտքի անմիջական կրողն է: Հունական իմաստասիրությունը, մատերիալիստական ու իդեալիստական ուսմունքների իր ողջ տարբերությամբ, սոփեստների հարաբերականության (ռելյատիվիզմ) ու Պլատոնի բացարձակ իդեալիզմի ողջ հակադրությամբ հանդերձ (էլ չենք խոսում Արիստոտելի խիստ տեսական մտակեցվածքի մասին) շատ ավելի բանական է և կառուցիկ: Անգամ վերկենսական (աստվածների) աշխարհը նկարագրող առասպելը դիտարկվում էր որպես բնության ճանաչում: Եվ մշակութային այնպիսի իրողություններ, ինչպիսին են առաքինությունը, գեղագիտությունը, քաղաքական և անգամ կրոնական գիտակցությունը, անտիկ մտածողների համար անդրսահմանային երևույթներ էին: Նրանք մարդու մեջ Լոգոսի կրողին էին տեսնում: Ուստի և, ըստ Պրոթագորասի բանաձևի, «բոլոր իրերի չափանիշը»:

Արժեքը տվյալ անհատի կամ հանրույթի համար կենսականորեն առավել նշանակալի երևույթն է՝ նյութական կամ հոգևոր այս կամ այն բարիքը: «Ազատություն», «փող», «ընտանիք», «տոկունություն», «արդարություն», «կրթություն», «փառք», «իշխանություն», «հեղինակություն», «սեր», «առողջություն», «ուժ», «բարեպաշտություն», «ընկերություն», «իմաստություն», «երջանկություն» և այլն՝ արժեքներ են, որոնք բավարարում են անհատի (հանրույթի) կենսական պահանջմունքները, իմաստավորում կյանքը, ուղղորդող դեր են խաղում նրա կենսագործունեության մեջ[1]:

Ոչ թե այդ առարկաները, երևույթները, հատկությունները ինքնին արժեքի կարգավիճակ ունեն, այլ տվյալ սուբյեկտի ներքնածին հատկությունները, առկա մշակութային պայմաններն են դրանց հաղորդում արժեք լինելու կարողություն:

[1] Асмолов А.Г. Психология личности М.: Изд.-во МГУ, 1990.с.-41.

Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, քանի որ բոլոր արժեքները փոխկապված են և գոյացնում են անձի ներաշխարհի ամբողջությունը: Խմբի, խավի, կազմակերպության, ազգի արժեքները նույնպես համակարգային հատկանիշ ունեն, որովհետև դրանք նույնպես փոխպայմանավորված են և ամբողջացնում են տվյալ հանրույթի հոգևոր կերպարը: Հասուն անձը ունի արժեքների իր համակարգը (թեպետ, հնարավոր է, նա երբևէ խորհրդածած չլինի դրա շրջանում), որը ձևավորվում է նրա սոցիալականացման ընթացքում: Սոցիոլոգիական հարցումները, թեստերը, ինքնագնահատականի զանազան միջոցները պարզաբանում են այդ արժեքները, իսկ ավելի ստույգ դրանց մասին շրջապատի մարդիկ դատում են ըստ անձի իրական արարքների:

Ազգի արժեքների համակարգը հիրավի բախտորոշ նշանակություն ունի: Հակիրճ՝ դա ազգի պատմական երկարատև զարգացման վկայությունն է, ներկա կեցության հիմքը, բնականոն գործառության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգահատուկ արժեքներն արձանագրվում են ազգի ինքնագիտակցության տարբեր ձևերի մեջ՝ արվեստի, բարոյականության, փիլիսոփայության, կրոնական պատկերացումների, բանահյուսության:

Արժանապատվությունը սեփական անձի արժեքի գիտակցումն է: Դա անձի ինքնագնահատականն է, իր վաստակի, դիրքի, արարքների, իրավունքների գնահատականը: Ունենալ արժանապատվության զգացում՝ նշանակում է ունենալ սեփական «ես»-ի արժանիքի զգացում, ինքն իրեն համարել որոշակի պատվի, հարգանքի, հեղինակության արժանի: Ազգային արժանապատվությունը, բնականաբար, սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը որպես ազգի ներկայացուցիչ:

Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը իր հանդեպ անձի հարգանքն է, ապա արդարամտությունը հարգանքն է ուրիշների հանդեպ, նրանց արժեքի գիտակցումը, այլոց գնահատումը: Լինել արդարամիտ՝ ամենից առաջ նշանակում է լինել արժանահատույց՝ ամեն մեկին ըստ արժանվույն հատուցելու ունակ:

Իսկապես արդարամիտ կարող է լինել միայն արժանապատվություն ունեցողը: Իր ազգակցին, առհասարակ ուրիշին արդարացի գնահատելու ընդունակությունը հետադարձ ազդեցություն է գործում ինքն իրեն գնահատելու վրա՝ մարդուն օգնում ճիշտ, սթափ, հավասարակշիռ գնահատել թե՛ իրեն, թե՛ այլոց[2]: Այն, թե ո՞ւմ և ինչի՞ համար ենք համարում արժանապատիվ, բնութագրում է ոչ միայն ուրիշներին, այլ հենց ինքներս մեզ: Արդարամտությունը, այսպիսով, հակադարձվող բնութագրում է,

[2] Васильюк Ф. Е. Психология переживания. Изд. –во Моск. Ун-та, 1984,с. – 95.

այսինքն՝ ոչ միայն արտահայտում է մեր սեփական ինքնագնահատականը, այլև անդրադառնում է դրա վրա:

Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի (հանրույթի) վերաբերմունքն է: Սա բացառիկ կարևորության բնութագիր է՝ թե՞ անձի, թե՞ ազգի, թե՞ ամբողջ քաղաքակրթության առումով: Աշխատասիրությունը կայուն, բարգավաճ, զարգացող սուբյեկտի հատկությունն է, առաջընթացի գլխավոր նախադրյալը:

Առանձնացված արժեք-արժանիքները անկապտելի են: Դրանց ներքին միասնությունը և փոխպայմանավորվածությունը կարող ենք անվանել «Երեք Ա-ի օրենք»: Սրա էությունն ավելի լավ հասկանալու համար դիտարկենք օրենքի խախտումները:

Միայն անձի արժանապատվությունը՝ առանց արդարամտության և աշխատասիրության, կարող է հանգեցնել անհատապաշտական ինքնահավանության, գոռոզության, նարգիզականության: Արդարամտությունից ու աշխատասիրությունից զուրկ անձը ունի բարձր, գերբարձր ինքնագնահատական, որն այդպիսին է, քանի որ նա, նախ, ունակ չէ արդար գնահատելու մյուսներին[3]: Բացի այդ՝ ինքնագնահատականը աղճատված է, քանի որ շրջանցում է մարդու անհատական ինքնահաստատման ու հանրային պիտանիության հիմնական ասպարեզը՝ աշխատանքը: Իսկ ազգային արժեքների համակարգի առումով դա անցանկալի է, քանի որ երբ ազգի հավաքականության մեջ մեծ է այսպիսի անհատների տեսակարար կշիռը, ապա սաստկանում են ազգային սնապարծության դրսևորումները:

Արժեքներն ու նորմերը անձի կառուցվածքային միավորներն են, որոնք թույլ են տալիս հետևել և վերլուծել մարդու գործունեության բոլոր ձևերը, բացատրել նրա ներքին հոգեբանական դրդապատճառների փոփոխությունը: Դրանք կազմում են միասնական կարգավորող համակարգ, որը կարգավորում է մարդկանց և սոցիալական խմբերի վարքագիծը հասարակության մեջ: Արժեքը նորմատիվային համակարգ է, որը գործունեության ձևի ընտրության ուղեցույց է, այն ստուգում և ընտրում է իդեալները, սահմանում նպատակները, ապահովում նպատակներին հասնելու միջոցները: Արժեքներն ու նորմերը մասն են կազմում ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գիտակցության և մշակույթի[4]:

Արժեքներն ու նորմերը սովորողի կառուցվածքային միավորներն են, որոնք թույլ են տալիս հետևել և վերլուծել մարդու գործունեության բոլոր ձևերը, բացատրել նրա ներքին հոգեբանական դրդապատճառների փոփոխությունը: Դրանք կազմում են միասնական կարգավորող համակարգ, որը կարգավորում է մարդկանց և

[3] Վալերի Միրզոյան, «Հայ Արիներ» Թիվ 18, 2003թ., էջ 24:
[4] В. Карпушина, В. Капцов, Структура личностных ценностей, статья, 14.15.2009:

սոցիալական խմբերի վարքագիծը հասարակության մեջ: Արժեքը նորմատիվային համակարգ է, որը գործունեության ձևի ընտրության ուղեցույց է, այն ստուգում և ընտրում է իդեալները, սահմանում նպատակները, ապահովում նպատակներին հասնելու միջոցները: Արժեքներն ու նորմերը մասն են կազմում ինչպես անհատական, այնպես էլ հասարակական գիտակցության և մշակույթի[5]:

Արժեքներ են նաև այն գաղափարները, իդեալներն ու նպատակները, որոնց ձգտում է մարդը և ժողովուրդը: Առանձնացվում են.

- ունիվերսալ կամ համամարդկային արժեքներ՝ սեր, հեղինակություն, հարգանք, ապահովություն, գիտելիքներ, արժույթ, իրեր, ազգություն, ազատություն, առողջության,
- ներխմբային արժեքներ՝ քաղաքական, կրոնական,
- անհատական արժեքներ՝ անձնային:

Գիտնականների կողմից արժեքները դասակարգվել են որպես՝ 1) ճանաչողական, 2) սոցիալական 3) քաղաքական, 4) կրոնական, 5) գեղագիտական և 6) տնտեսական[6]:

այսօր կրոնական դաստիարակության մեջ «իրեն զգացնել է տալիս գիտական լուրջ հիմնավորումից զուրկ ինքնագործունեությունը, տնավարությունը: Բնականաբար տասնամյակներ շարունակ, թե մարդկանց հոգիներում, թե մանկավարժագիտական գրականության մեջ կրոնաբարոյական արժեքները չեն իմաստավորվել, չեն դարձել ուսումնասիրության առարկա, արժեքներ, որոնց դաստիարակչական հնարավորությունները դժվար չէ գերագնահատել:

Կրոնի դաստիարակչական առաքելության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն սովորողի ներաշխարհի վրա ներգործելու մի ամբողջ համակարգ է՝ սոցիալպատմական և էթնոհոգեբանական արմատներով:

Հիմնվելով կրոնի և հավատի վերաբերյալ շատ հոգեբանների կատարած հետազոտությունների վրա՝ գտնում ենք, որ երեխաներին անհրաժեշտ է փոքր տարիքից զինել հոգևոր արժեքային գիտակցությամբ, օգնել դրանց ավելի խորը վերլուծությանը և անձնական փորձով համոզմունքների ձևավորմանը: Այս մոտեցումը ավելի մեծ տարիքում կարող է նպաստել կրոնական գիտակցության արժեքային կողմնորոշմանը: Այն հետագա կյանքի ընթացքում հնարավորություն կտա անձնավորությանը ճիշտ վերլուծություններ կատարելու հավատքի վերաբերող

[5] Карпушина В., В. Капцов, Структура личностных ценностей, статья, 14.15.2009:
[6] Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., էջ 35-39:

խնդիրներում: Այս հարցում մանկավարժին անկասկած կարող է օգտակար լինել կրոնական հոգեբանության իմացությունը:

Ցանկացած հոգեկան երևույթ իրենից ներկայացնում է իմացական, զգայական և կամային պրոցեսների ամբողջություն: Այդ թվում նաև հավատքի հոգեկան երևույթը: Հոգեբանության խնդիրը մարդու գործունեության պարզաբանումն է, նրա հոգևոր կյանքի սաղմնավորման, կազմակերպման և հետագա զարգացման ընթացքում: Հոգեբանները գտնում են, որ մարդու հարմարվելը արտաքին միջավայրին սկզբում կատարվում է մեխանիկական բնույթի գործողությունների միջոցով, որոնք հետզհետե դառնում են ավելի գիտկցված և նպատակաուղղված: Կատարվում է գործողությունների ինտերիորացում (ներհայեցողություն)՝ այսինքն դրանք վեր են ածվում մտավոր օպերացիաների՝ կատարվելիք գործողությունների մտավոր քննարկումների և ստուգումների պրոցեսում, որը հնարավոր է դարձնում նպատակաուղղված, իմաստավորված գործունեության ծավալումը : Այս ժամանակ է, որ արտահայտվում են կրոնական գիտակցության սաղմերը: Հաճախ գիտակցությունը նույնացվում է զգայության, մտապատկերների և մտածողության հետ, որն արտահայտվում է կրոնական պատկերացումների միջոցով, այս դեպքում, հոգեկանը դիտվում է, որպես օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ պատկեր[7]: Ռ. Բերխոուն հայտարարում է, որ, կրոնական խորհրդանշանները ունեն յուրահատուկ գենետիկական ձև, այսինքն բիոքիմիական հիմք, որը ներդրված է գլխուղեղի բարդ կառուցվածքում և արտահայտվում է անգիտակցականի ոլորտումե: Իսկ Թ. Շերրինգտոնն առաջիններից մեկն էր, որ առաջ քաշեց ներվային համակարգի ամբողջական կառուցվածքի և գործունեության մասին գաղափարը՝ որպես անհատի ձևավորման մեխանիզմ: «Կենտրոնական նյարդային համակարգը, թեկուզ և կարելի է տարանջատել առսովորողի ն մեխանիզմների, իրենից ներկայացնում է ներդաշնակ և միասնական ամբողջություն»: Նրա կարծիքով դրանց ուսումնասիրության համար անհրաժեշտ է ուսումնասիրել ռեցեպտրային (ընկալող) օրգանները, որոնցում սկսում է օրգանիզմի ռեակցիաները որոշակի դաշտերում[8]:

Ըստ Ա. Լեոնտևի «Սովորողի արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունենում հասարակական նյութական և հոգևոր փորձի փոխանակման գործընթացում, աշխատանքային կամ գործունեության այլ պայմաններում, այսինքն՝ դաստիարակության ընթացքում»[9]: Հոգևոր փորձի փոխանցումը լուրջ և պատասխա-

---

[7] Օլշաննիկովա. Ա. Ե., Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ., էջ 46:
[8] Капцов, А. В. Аксиологическая направленность личности : Руководство по применению теста / А. В. Капцов, Л. В. Карпушина. Самара : Содружество, 2006. с. – 26.
[9] А.В.Капцов, Психологические факторы личносней молодежи, Серия «Психология». 2008. №2(4). С.118- 124.

նատու գործընթաց է, որի գործունեական բաղադրիչներն են հոգևոր գիտելիքների, հոգևոր զգացումների ու հոգևոր վարքի ձևավորումները:

Դաստիարակության գործընթացում հոգևոր և բարոյական զգացմունքերի ձևավորման ինտեգրացված մոտեցում է առաջարկել ռուս փիլիսոփա աստվածաբան, հոգեբան մանկավարժ, պրոֆեսոր Վ. Զենկովսկին, որը Ժ. Ռուսոյի առաջարկած այն տեսությունը, թե երեխայի բանական էությունը մաքուր է ու բարի, համարում է միակողմանի, այնպես, ինչպես Ի. Կանտինը՝ մարդու չար բանականության վերաբերյալ: Վ. Զենկովսկին առաջարկում է դիտարկել խնդիրը հոգևոր տեսանկյունից՝ միավորելով այդ երկուսը մեկ՝ քրիստոնեաբարոյական ուսմունքի մեջ: Ըստ այդմ, մարդը ներկայանում է, որպես «Աստծո նմանությամբ ստեղծված»՝ բարի բանական էակ, իսկ նրա բարոյական նորմերի խախտման երևույթը՝ չար (մեղավոր մարդ): Նա համարում է բարոյական դաստիարակությունը չարի ակտիվ հաղթահարում՝ դրական հոգևոր, կամային պոտենցիալի հայտնաբերման և հաստատման միջոցով: Այն իր մեջ ամփոփում է նաև դաստիարակության դրականի վրա հենվելու սկզբունքը, ինչպես նաև, արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտությունը[10]:

2. Արժեքային համակարգի ձևավորումը «Գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում

Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, ուր կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը: Ուսուցչի մարդկային և բարոյական կերպարը, մանկավարժական կոմպետենտությունը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: «Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է»[11]: Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային հարաբերությունների միջոցով աշակերտների մեջ ձևավորում է ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական

[10] Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978, 452 с.
[11] Кон И. С., Психология старшекласника, М., “Просвещение”,1980, էջ 132:

ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի հետաքրքրություն:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն)առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամա-կարգային դաստիրակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիաներ, ընդօրինակել միմյանց և այլն:

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է անթերի դաս անցկացնել, սակայն միշտ չէ, որ դա հաջողվում է: Որակյալ դաս անցկացնելը այդքան էլ հեշտ չէ, նույնիսկ փորձառու ուսուցչի համար: Դա կախված է մի շարք գործոններից,

1. սոցիալական պատվերով պայմանավորված՝ դասերին ներկայացվող պահանջների գիտակցումից և կատարումից,
2. նպատակներից, ինչպես նաև ուսումնադաստիրակչական և զարգացնող խնդիրների լուծումից,
3. ուսումնական գործընթացի օրինաչափություններից և սկզբունքներից,
4. դեպի ազգային արժեքներ ուսուցման կողմնորոշումից,
5. սովորողներին ազգային և համաշխարհային մշակույթի, մարդկության հոգևոր փորձին ծանոթացնելու ՝ պատմության դասերի ուղղվածությունից,
6. դասերի ժամանակ համաշխարհային և ազգային պատմության համամասնության պահպանումից,
7. պատմական փաստերի բազմակողմանի գնահատումից, միևնույն իրադարձության կամ երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետների ծանոթանալուց և այնպիսի պայմանների ստեղծումից, որ սովորողների մոտ ձևավորվի սեփական հիմնավորված կարծիք,
8. սովորողների մոտ տեղեկատվություն աղբյուրների նկատմամբ քննադատական վերաբերմունքի ձևավորումից, դրանց հետ ինքնուրույն աշխատելու և հետևություններ անելու կարողությունների մշակումից,
9. ստեղծագործական, զգացմունքային մթնոլորտի ձևավորումից, որը հենված է դասի բովանդակության և ուսումնական աշխատանքի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների վրա[12]:

[12] Կիրակոսյան Գ.Հ., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Եր. 2015, էջ 56:

Գրականության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և, ընդհանրապես, գրականության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը գրական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին, ուսումնադաստիրակչական գործընթացի օրինաչափություններին: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գրականության դպրոցական դասընթացը չի ընդգրկում գրականագիտության բոլոր նվաճումները:

Գրականության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սովորողների մարդկության պատմական ուղու, նրա սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, կոնկրետ ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիրակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիաների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնաղումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում[13]:

Գրականության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիրակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքներիմ հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը,

[13] Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 63-66:

խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության - հանրագումարային դասերըմ կինո-դասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը: Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, մեր համոզմամբ, խառը /համակցված/ դասն է, որին ստորև կանրադառնանք փոքր-ինչ հանգամանորեն: Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում, ընդհանրացում, ստուգում և գնահատում: Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս:

Գրականության առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝զինել աշակերտներին ազգային արժեքներով: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ:

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց գրականության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությաունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից:

2. Ցույց տալ հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:

6. Բացահայտել գրական գործիչների՝ գրականագիտական կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ գրական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում:

8. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակույթային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

9. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

10. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

11. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները. խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները: Սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ:

12. Ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ[14]:

Գրականության ուսուցման գործընթացում արժեհամակարգի և աշխարհայացքի ձևավորման ու վարքագծի մշակման, գեղագիտական-բարոյական դաստիարակության, կամքի կոփման ու զգացմունքների հղկման, հուզաշխարհի

[14] Հովհաննիսյան Ս., Հայ գրականության ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորում և մեթոդական մշակում, Երևան, 1978, 1-ին և 2-րդ մաս, էջ 14-21:

ազնվացման և հոգևոր հարստության կուտակման անսպառ ակունք է ստեղծագործութան հերոսների օրինակը:

Ինչպես ժամանակակից կյանքը, այնպես էլ հեռավոր անցյալը պատկերող ստեղծագործություններում իրականությունը վեր է հանվում և արտացոլվում հիմնականում կերպարների միջոցով: Կերպարը հեղինակի խոսափողն է: Գրական կերպարը հեղինակի մտքերի, հույզերի, տրամադրությունների արտահայտիչն է: Կերպարի միջոցով հեղինակը դրսևորում է իր համակրանքն ու հակակրանքը, սերն ու ատելությունը, մերկացնում կամ դրվատում գոյություն ունեցող օրենքները, պետական կարգերը, ծառանում ընդդեմ օտար բռնակալների և ներքին թշնամիների: Կերպարը բնութագրելիս ուսուցիչը պետք է օգտագործի բոլոր այն ուշագրավ դրվագները, որոնք դաստիարակչական խոր իմաստ են պարունակում: Աշակերտները պետք է նկատեն, որ դրանցում դրսևորվում են հերոսի նվիրվածությունը, նպատակադրումը, աշխատասիրությունը, դժվարությունները հաղթահարելու մեծ հավատը, հաստատակամությունն ու վճռականությունը, բողոքը հոռի բարքերի դեմ[15]:

Գրականությունը սովորեցնում է մարդկանց ճիշտ ապրել կյանքը, լինել բարի, անաչառ, ճշմարտախոս և ազնիվ, մարդկային և մարդասեր, հայրենասեր, ծնողասեր և ընկերասեր: Այս ամենը կարելի է ամփոփել մեկ նախադասությամբ՝ օժտված լինել բարոյական բարձր հատկանիշներով, ունենալ բարոյական բարձր սկզբունքներ: Աղասու կերպարի ուսուցումը մեզ տալիս է հնարավորություն՝դաստիարակելու բարոյական բարձր հատկանիշներով օժտված մարդ: Ակտիվ ուսումնառություն ապահովելու, որոնողական աշխատանքի մղելու, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու նպատակով ես Աղասու կերպարի մասին ոչ մի խոսք չեմ ասում աշակերտներիս: Կերպարի ամբողջ ներկայացումը թողնում եմ իրենց վրա: Ուղղակի մի երկու դաս առաջ տալիս եմ Աղասու կերպարի բնութագրման պլան և պահանջում պլանի բոլոր կետերի վերաբերյալ գրականության տետրերում նշումներ կատարել՝ «Վերք Հայաստանի» վեպից ընտրելով համապատասխան տողեր և արտահայտություններ:

Պլան

1. «Վերք Հայաստանին»՝ ականատեսի վկայություն
2. Հերոսի ընտրության հարցը
3. Աղասու անձնավորության խնդիրը
4. Աղասու ուժի և արտաքինի նկարագրությունը
5. Աղասին՝ բնության զավակ. նրա փիլիսոփայությունը մարդու մասին

[15] Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով, ուղեցույց, 1-7 պրակ, 1988, էջ 87-89:

6. Աղասու կյանքի նշանաբանը

7. Ծնողների և մեծերի հանդեպ նրա տածած սերն ու պատկառանքը

8. Խեղճին օգնելու բարձր գիտակցությունը

9. Շրջապատի վերաբերմունքը Աղասու նկատմամբ

10. Աղասուն բնութագրող այլ տողեր

11. Վեպի մյուս հայրենասեր հերոսները[16]:

Մինչ անցնելը պլանի հարցերի քննարկմանը, կարդում ենք նշանավոր մարդկանց ասույթները «Վերք Հայաստանի» վեպի մասին, որպեսզի աշակերտները լավ պատկերացնեն վեպի արժեքը, նրա տեղն ու դերը մեր գրականության մեջ: «Ավելի դյուցազներգություն է, քան թե վեպ: Պարզ ու համեստ մարդեր չեն իր հերոսները, այլ հսկաներ, որոնք իրենց «էրված սիրտը» ողջակեզ կբերեն ազգին: Եվ, այսպես, Աբովյանի տիպարները իրականությունեն դուրս կուգան կարծես ու կմտնեն հեքիաթային, առասպելական աշխարհի սահմաններեն ներս»: «Վերք Հայաստանին» նոր օրերու «Նարեկն» է, տարերային բխումով ստեղծված գործ մը, որ ձեռագիր վիճակի մեջ իսկ տուն-տուն կարդացվեցավ երկյուղածությամբ: Ընթացիկ առումով վեպ մը չէ սա: Դյուցազներգություն է և բանաստեղծություն նույն ատեն: Առաքյալի մը և մարգարեի մը սիրտը կտրոփե անոր էջերուն մեջ »:

Վարդ Վարդանին համարելով հինգերորդ դարում նույն պարսիկների դեմ մղված պատերազմում նահատակված Վարդան Մամիկոնյանի շառավիղը՝ Աբովյանը նրան օժտել է այդ տոհմին հատուկ բացառիկ գծերով՝անկեղծ հայրենասիրությամբ և անսովոր քաջությամբ: Հեղինակի խոսքերով ասած՝ «հրաշագեղ», «թագավորածին» և «հզոր» այդ պատանին է, որ մի զարկով երկու կես է անում Օքյուզ Աղին, իսկ «հինգ սհաթումը քառասունից ավելի մարդ է սպանում կամ յարալու անում»: Այսքանով ավարտում եմ Աղասու կերպարի ուսուցումը և համոզված եմ, որ եթե դուք էլ փորձեք նման մեթոդով առաջնորդվել, կունենաք շոշափելի արդյունք:

Բոլոր ժամանակներում, բոլոր ժողովուրդներին ու ազգերին բնորոշ է համամարդկային այնպիսի մի երևույթ, ինչպիսին է հայրենասիրությունը: Բարձրարժեք է այն գրական երկը, որ, ունենալով ազգային հող ու ազգային սյուժե, կատարում է խոր ընդհանրացումներ, արծարծում համամարդկային արժեքներ: Այդպիսի երկերը հարատևում են դարերով, կրթում ու դաստիարակում սերունդներին: Այդպիսի մնայուն արժեք է Ռաֆֆու «Սամվել» վեպը, որը սերունդներին հայրենասիրության դասեր է տալիս: Դպրոցում գրականության ուսուցումը ոչ միայն ճանաչողական, կրթական այլև դաստիարակչական նշանակություն ունի: Ուսուցչի առաջնահերթ խնդիրներից է նաև աշակերտների մեջ հայրենասիրության դաստիարակումը, հայրենասիրության մասին

[16] Հովհաննիսյան Ս., Գրականության ժամանակակից դասը, Երևան, 1983, էջ 147:

ամբողջական պատկերացում տալը: Այստեղ արժի հիշել վեպի առաջաբանից հետևյալ տողերը. «Խրախուսվելով այն գաղափարով, թե որքան մեծ կրթողական ազդեցություն ունի պատմական վեպը ընթերցողի համար, երբ նա տեսնում է յուր նախնյաց մեծագործությունները և աշխատում է հետևել նրանց առաքինություններին, տեսնում է նրանց մոլորությունները, աշխատում է հեռու պահել իրեն նրանց կատարած սխալներից...»[17]:

Ռաֆֆու մեծադիր նկարը, ասույթներ հայրենասիրության մասին, պատմական Հայաստանի քարտեզը, Մարտիրոս Սարյանի «Առավոտ» և Գ.Նալբանդյանի «Արարատյան դաշտավայրը» կտավների լուսանկարները:

Երբ հիմնական ուշադրությունը դարձվում է միայն Սամվելի կերպարի վերլուծությանը և նրա միջոցով հայրենասիրության բացահայտմանը, ստացվում է միակողմանի, ոչ համոզիչ: Դրա համար նախ պետք է ծավալել զրույց հայրենասիրության մասին, իմանալ սովորողների պատկերացումները հայրենասիրության մասին, իմանալ, թե իրենք ինչքանով են հայրենասեր, որն է իրենց դերը հայրենիքում, իրենք ինչի են պատրաստ հանուն հայրենիքի: Շատ աշակերտների կարծիքով հայրենասեր կարելի է դառնալ միայն հայրենիքի համար կռվելով, պատերազմներին մասնակցելով:

Աշակերտներին ամբողջական պատկերացում տալու վեպի մասին, ինչպես նաև կերպարը սպառիչ բնութագրելու համար մեկնաբանման ողջ ընթացքում պետք է միշտ դիմել հեղինակին, մեջբերումներ կատարել վեպից: Առանց փաստերի ու օրինակների՝ վերլուծությունը զուրկ է որոշակիությունից, վերացական է: Ուսուցիչը աշակերտին պետք է մղի ինքնուրույն, ստեղծագործական աշխատանքի՝ նախապես որոշ ուղղություն տալով: Սամվելի կերպարի ամբողջական բացահայտման համար աշակերտների միջև աշխատանքի բաժանում եմ կատարում: Աշակերտներից ամեն մեկը ինքը պետք է կարդա իր գրի առած հատվածները, ինքը մեկնաբանի, արտահայտի իր վերաբերմունքը՝ հիմք ընդունելով նախօրոք տրված պլանը. 1. Սամվելը՝ պատմական անձնավորություն. 2. Ընթերցողի առաջին հանդիպումը Սամվելի հետ. 3. Սամվելի ժողովրդականությունը. 4. Սամվել և Աշխեն.5.Հերոսի ներքին դրաման ու տագնապը. 6. Որդու և ծնողների գաղափարական հակամարտությունը. 7. Զգացմունքների պայքար. 8. Հայրենիքի սերը և ծնողականմարդկային ներքին զգացումը . 9.Հոր և որդու երկխոսությունը . 10. Շողացող սուրը մաքրեց փառավոր տոհմի անվան վրա դրված սև բիծը. 11. Արյան մեջ թավալվող հոր և երկար ժամանակ անշարժ արձանի նման կանգնած Սամվելի

[17] Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976, էջ 241:

հոգեկան ծանր դրաման. 12. «...այն սուրը, որ սպանեց դավաճան հորը, կսպանե և ուրացող մորը». 13. Հոգեբանական ավարտի արագ ու համոզիչ լուծումը[18]:

Աշակերտները պետք է գիտակցեն և հասկանան, որ հայրենասիրությունը այնքան խորը զգացմունք է, որի առաջ կարող են խոնարհվել մարդկային մի շարք զգացմունքներ: Հենց այս հանգամանքը բացահայտելու գործին ուսուցիչը առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնի այն ժամանակ, երբ խոսվում է Սամվելի՝ ծնողներին սպանելու արարքի մասին: Չպետք է պարզունակ ձևով ներկայացնել սովորողին, թե հորն ու մորը սպանելը Սամվելի համար մի հասարակ բան էր: Ծնողասիրությունը սուրբ բան է, ու եթե մեկը ձեռք է բարձրացնում ծնողի վրա, նշանակում է նրա արարքը պետք է պատճառաբանված լինի՝ հանցագործ չկոչվելու համար:

Վեցերորդ դասարանի դասագրքում՝ «Իմ երկրի երգերը» խորագիրը կրող բաժնում, տեղ է գտել Մուշեղ Գալշոյանի «Աղբրանց արուն մեջ քարերուն» պատմվածքը՝ «Կռունկ» վերտառությամբ: Այս թեմայից անցկացված մեկ դասի օրինակով ցույց տանք գեղագիտական ընկալման զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Խթանման փուլում տեղի է ունենում սովորողների իմացության վերհանում, ներքին ուժերի «կենտրոնացում», հոգեբանական նախապատրաստում նոր նյութի ուսումնասիրության համար: Այս փուլում կիրառվում է «Հինգրոպեանոց շարադրանք» մեթոդը: Ուսուցիչն առաջարկում է լսել Կոմիտասի մշակած «Կռունկ» երգը, ապա գրի առնել դրա ազդեցությամբ մտքում ծնված պատկերները: Հնչում է երգը, սովորողները նախ լսում են, ապա հինգ րոպեի ընթացքում փորձում են գրի առնել, թե ինչ պատկերներ էին տեսնում երգը լսելիս: Երբ ժամանակը սպառվում է, սովորողներից մի քանիսը կարդում են իրենց գրառումները:

Պատմվածքն ունի պատկերային-արտահայտչական վառ համակարգ և խոր ենթիմաստ, որոնք, հատկապես անվարժ ընթերցողի համար, կարող են թաքնված մնալ և չբացահայտվել: Այդ պատճառով էլ պատմվածքի ընթերցումը և ուսուցումը պետք է դիտել որպես աշակերտի և ուսուցչի համատեղ գործունեություն: Ուսուցիչը չի թերագնահատում սովորողի դերն ու նշանակությունը պատմվածքի ուսումնասիրության ընթացքում, ընդհակառակը, միտք շարժող հարցադրումներով և զգայական ընկալման խթանումով ստիպում է, որ սովորողներն ինքնուրույն մեկնաբանություններ տան, վերլուծեն պատմվածքն ինչպես ամբողջության մեջ, այնպես էլ առանձին հատվածներով:

[18] Հովասափյան Հ., Գրականության ուսուցման հարցեր, Երևան, 1979, էջ 97-102:

Իմաստավորման փուլում աշակերտները ընթերցում են Մուշեղ Գալշոյանի պատմվածքը, որն իրականացվում է «Կանգառներով ընթերցանության» մեթոդով: Այսինքն՝ որոշակի տրամաբանական հատվածներից հետո կանգ են առնում և փորձում գուշակել, թե ի՞նչ է լինելու հետո, կամ էլ ուսուցիչը միտք շարժող զանազան հարցադրումներով փորձում է սովորողներին հասու դարձնել տվյալ հատվածի թաքնված ենթիմաստին: Օրինակ՝ պատմվածքի առաջին մասը կարդում են մինչև այնտեղ, երբ Մարգարիտը Կոմիտասին ասում է.

Գնանք մի քիչ շրջենք, աղաչում եմ: Ուսուցիչը հարցնում է.

Ի՞նչ եք կարծում, Կոմիտասը կգնա՞ շրջելու:

-Ինչո՞ւ եք այդպես կարծում՝ մեկնաբանե՞ք:

Պատմվածքում ձեր տեսակետն ապացուցող ի՞նչ փաստեր կան:

Նմանատիպ մի քանի դադարներից, հարցերին պատասխանելուց, տվյալ հատվածը բացատրելուց և մեկնաբանելուց հետո ուսուցիչն սկսում է աշխատանք տանել տեքստի լեզվառճական առանձնահատկություններն ուսումնասիրելու շուրջ: Առաջարկվում է հատկապես գտնել և նորից կարդալ այն հատվածները, որոնք իրենց մեջ ձայն են պարունակում, այսինքն՝ բառերով հաղորդվում են բնության կամ մարդկանց: Հատուկ պիտի կանգ առնել և աշակերտների ուժերով բացատրել հետևյալ հատվածները.

1. «Նա երկար շրջել էր Արևմտյան Հայաստանում, անցել գավառից գավառ, հավաքել մեռնող, գաղթող ու ննջող երգերը, սերմել հույս և ուրախության երգ, անցել էր Եգիպտոսի հայաշատ քաղաքներով և մյուռոնի փոխարեն նա՝ հայր սուրբը՝ Կոմիտաս վարդապետը, տարաշխարհիկ հայերին մկրտել հայ ոգով, ի տեղ նշխարի՝ նրանց բերանները երգով քաղցրացրել»

Այս նախադասությունն ընթերցելուց հետո ուսուցիչը աշակերտներին առաջարկում է գտնել և բառատետրերում գրառել մի քանի բառերի բացատրությունները, ինչպես՝ մյուռոն, տարաշխարհիկ, նշխար, վեղար և այլն: Ապա ուսուցիչը հարցնում է.

Ինչո՞վ կարելի է քաղցրացնել բերանը (մեղր կամ քաղցրավենիք՝ կոնֆետ, թխվածք): Այնուհետև առաջարկում է, որ աշակերտները «բերանը երգով քաղցրացնել» միտքն արտահայտեն իրենց բառերով, ինչպես նաև մեկնաբանեն այն:

2. Հատուկ քննության է ենթարկվում հետևյալ հատվածը. «Կոմիտասն անհանգիստ քայլում էր, ու ոտնաձայների հետ մեղեդին ալիքվում էր դահլիճում: Եվ առավոտից գիշեր տաք-տաք երգ էր ժայթքում Սպիտակ կղզում»:

Ուսուցիչը հարցնում է.

Ի՞նչ եք հասկանում՝ «ոտնաձայների հետ մեղեդին ալիքվում էր դահլիճում» ասելով: Լսելով մի քանի պատասխաններ՝ ուսուցիչը տալիս է հաջորդ հարցը.

Կարո՞ղ է տաք-տաք երգ ժայթքել: Ինչպե՞ս դա կարող է պատահել:

Իսկ իրականում ի՞նչը կարող է ժայթքել:

Ուսուցիչն առաջարկում է քննարկումից հետո այդ միտքն արտայայտել այլ բառերով, ապա համեմատել հեղինակի գրած և իրենց ձևակերպած նախադասությունները:

3. Պատմվածքում շատ ուշագրավ է հատկապես այն փաստը, որ օտարերկրացիները խոր ակնածանք են տածում հայ հոգևորականի և հայ մշակույթի հանդեպ: Ասում են՝ այս հոգևոր հայրը հայ երաժիշտ է, շշնջում էր մեկը, և թեկուզ երևացողը Կոմիտասի թիկունքն էր, հարգանքով գլուխ էր տալիս ու հեռանում: Պատմվածքի հեղինակը աշխարհն զգում և ընկալում է Կոմիտասի տեսանկյունից. պատկերները, գույները, նկարագրություններն անընդհատ զուգորդվում են ձայներով. օրինակ՝ «Կոմիտասը թիկնել, աչքերով ջրերի շշուկներն էր հավաքում»: Կամ՝ «ալիքները գանգատ ունին, նրանք անտուն են, թափառական ու գանգատ ունին»:

Ամբողջ պատմվածքը լիքն է երգով, և սա պետք է հասցնել աշակերտներին, որ իրենք էլ փորձեն աշխարհն ընկալել մոտավորապես պատմվածքի հերոսի պես: Որ երգ լսելիս շոշափելիորեն տեսնեն, լսեն, զգան այն, այսինքն՝ զգայարաններով ընկալեն, ապա իրենց իսկ բառերով վերարտադրեն մտքում ծնված պատկերները, ձայները, մարմնական (կինեսթետիկ) զգացողությունները: Պատմվածքում շատ հուզիչ է հատկապես այն փաստը, որ հայ մշակույթը՝ հայ երգը զորեղ ազդեցություն է գործում օտարերկրացու վրա: Թեև իռլանդուհին հայերեն չի հասկանում, բայց նա իր ամբողջ էությամբ ընկալում է երգը. «Իռլանդուհու համար բառ ու խոսք չկար, կար միայն հայր սուրբից անջատվող անհատնում շունչ: Աշխարհում բացվել էր մի հորիզոն, ու հորիզոնում՝ երկու շնչավոր՝ մի խեղճ ու կրակ մարդ և ուղղություն ու երամ կորցրած մի կռունկ»: Այս հատվածում ուսուցիչն աշակերտներին առաջարկում է խթանման փուլում երգի ազդեցությամբ իրենց տեսած և գրառած պատկերները համեմատել իռլանդուհու տեսած պատկերների հետ: Այնուհետև ուսուցիչը փորձում է պարզել աշակերտների կարծիքներն այն մասին, թե ինչո՞ւ է իռլանդուհին «Կռունկ» երգի ազդեցությամբ տեսնում կամ պատկերացնում հենց պանդուխտին, այլ ոչ թե մեկ ուրիշ կերպար՝ ճանապարհորդ, վաճառական, ուսուցիչ և այլն:

Լսելով աշակերտների կարծիքները և լրացուցիչ մեկնաբանությունները՝ անցում է կատարվում դասի վերջին՝ կշռադատման փուլին: Կշռադատման փուլում ամփոփվում, ընդհանրացվում են աշակերտների ձեռք բերած գիտելիքները: Այս փուլում կարելի է կիրառել «Գրառումների օրագիր» մեթոդը, որի ընթացքում աշակերտները

պատմվածքից դուրս են գրում իրենց դուր եկած հերոսի անունը կամ որևէ հատված, ապա գրում են մեկնաբանություններ, թե ինչո՞ւ են հենց այդ հատվածը կամ հերոսին ընտրել: Գրառումներ անելուց հետո սովորողները կարդում են դրանք, բանավոր մեկնաբանություններով հանդես գալիս: Ապա աշակերտները անդրադառնում են Կոմիտասին նվիրված և հենց իր՝ Կոմիտասի գրած բանաստեղծություններին, արտասանում կամ կարդում են դրանք: Դասի վերջում դարձյալ լսում են Կոմիտասի մշակած «Կռունկ» երգը, որի ավարտից հետո աշակերտներն ասում են, թե ի՞նչ ձայներ էին լսում, ի՞նչ էին զգում, ի՞նչ պատկերներ էին տեսնում: Այս անգամ աշակերտներն ասում են նաև, թե դասի վերջում ի՞նչ նոր բան ավելացավ և ի՞նչ փոփոխություններ կատարվեցին իրենց պատկերացումների և ընկալումների մեջ:

Իբրև տնային ինքնուրույն առաջադրանքներ կամ հաջորդ դասի 284 թեմաներ աշակերտներին տրվում են ստեղծագործական բնույթի հանձնարարություններ. գրել կամ պատրաստվել գրելու՝

- նամակ Կոմիտասին
- նամակ իռլանդուհուն
- հարցազրույց իռլանդուհու հետ
- հարցազրույց Կոմիտասի հետ:

Այսպիսով՝ ընթերցանության դասը դառնում է մեր ազգային մշակույթի երևույթներից մեկին՝ Կոմիտասին, ընկալելու և նրա գործն արժևորելու պահ: Գրական երկի և երաժշտության այսպիսի զուգորդումները զարգացնում են աշակերտների ճանաչողությունը, արժեքների ընկալումն ու գնահատումը, զգայական աշխարհ-ընկալումը, ստեղծագործական երևակայությունը, ինքնուրույն դատողություններ կատարելու կարողությունը և խոսքը: Այսպիսի դասերը ձևավորում են գեղագիտական աշխարհընկալում, ճաշակ և հարգանք ազգային մշակույթի հանդեպ:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով վերոնշյալ թեման, եկանք այն եզրահանգման, որ նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին Գրականության դասերին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ գրականությունառարկան: Կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, և վարքի կարգավորիչ են դառնում իրավիճակն ու պահի նպատակահարմարություն, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դոլուխանյան Ա., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006.
2. Կիրակոսյան Գ.Հ., Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Եր. 2015.
3. Հովասափյան Հ., Գրականության ուսուցման հարցեր, Երևան, 1979.
4. Հովհաննիսյան Ս., Գրականության ժամանակակից դասը, Երևան, 1983.
5. Հովհաննիսյան Ս., Հայ գրականության ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորում և մեթոդական մշակում, Երևան, 1978, 1-ին և 2-րդ մաս.
6. Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976.
7. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.
8. Վալերի Միրզոյան, «Հայ Արիներ» Թիվ 18, 2003թ.
9. Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով, ուղեցույց, 1-7 պրակ, 1988.
10. Օլշաննիկովա. Ա. Ե., Հույզեր և դաստիարակություն, Երևան, 1985թ.
11. А.В.Капцов, Психологические факторы личносней молодежи, Серия «Психология». 2008. №2(4).
12. Асмолов А.Г. Психология личности М.: Изд.-во МГУ, 1990.
13. В. Карпушина, В. Капцов, Структура личностных ценностей, статья, 14.15.2009:
14. Васильюк Ф. Е. Психология переживания. Изд. –во Моск. Ун-та, 1984.
15. Капцов, А. В. Аксиологическая направленность личности : Руководство по применению теста / А. В. Капцов, Л. В. Карпушина. Самара : Содружество, 2006.
16. Карпушина В., В. Капцов, Структура личностных ценностей, статья, 14.15.2009:
17. Кон И. С., Психология старшекласника, М., “Просвещение”, 1980.
18. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978.